

**«Անեսթեզիոլոգիա և վերակենդանացում» մասնագիտությամբ
հետազոտողի որակավորման քննության
ՀԱՐՑԱՇԱՐ**

1. Որ մեխանիզմներն են ապահովում ներզանգային ճնշման կայունությունը և որ գործոններն են ազդում նրա փոփոխության վրա: Ուղեղի այտուցի պաթոֆիզիոլոգիական տարատեսակները, զարգացման մեխանիզմներն ու գնահատման մեթոդները:
2. Նյարդամկանային փոխանակության ինչպիսի խանգարումներ կան: Նրանց զարգացման պատճառները, մեխանիզմներն ու շտկման մեթոդները:
3. Արյան միջոցով հյուսվածքներին թթվածնի տեղափոխման ապահովման մեխանիզմները, հնարավոր խանգարումներն ու շտկման մեթոդները:
4. Սրտային արտամղում հասկացության բնութագիրը: Ինչ գործոններ են ազդում նրա փոփոխության վրա: Սրտի խոռոչներում ճնշման գոյացումը, գնահատման մեթոդները, տվյալների մեկնաբանությունը:
5. Ինչ գործոններով են պայմանավորված սրտի նախա- և հետծանրաբեռնվածության փոփոխությունները: Արյան մեծ ու փոքր շրջանառության հետծանրաբեռնվածության գնահատման մեթոդները, տվյալների մեկնաբանությունը և խանգարումների շտկումը:
6. Զարկերակային ճնշման կարգավորման մեծանիզմները, գնահատման եղանակները: Որ գործոններն են ազդում պսակային արյունահոսքի վրա:
7. Որոնք են հիպօքսեմիայի հիմնական պատճառները: Ինչպես է հաշվարկվում թթվածնի պարունակությունն արյան մեջ և զարկերակ-երակային տարբերությունը: Ինչպիսին են տարատեսակ հիպօքսեմիաների բուժման մոտեցումները:
8. Ինչ է pCO_2 -ը և ինչպես է այդ ցուցանիշը կապված ավելոյար վենտիլյացիայի հետ: Ինչ գործոններով է որոշվում $PaCO_2$ մակարդակը: Որոնք են հիպերկապնիայի և հիպոկապնիայի պատճառները և այդ խանգարումների շտկման մեթոդները:
9. Ինչպես են փոփոխվում շնչական ցուցանիշները օբստրուկտիվ և ռեստրիկտիվ տիպի խանգարումներով թոքային պաթոլոգիաների ժամանակ:
10. Որ ցուցանիշներով է բնութագրվում թոքերի ստատիկ և դինամիկ ձգելիությունը (compliance): Որ երևույթներն են նպաստում թոքերի ռիզիդության զարգացմանը: Թոքերի մեխանիկայի դինամիկ ինչ փոփոխություններ են բնորոշ հիպեր- և հիպովենտիլյացիային: Ինչ մեթոդներով որոշվում անատոմիական և ֆիզիոլոգիական մեռյալ տարածությունները:
11. Ինչ մեխանիզմներով է կարգավորվում արյունահոսքը փոքր արյան շրջանառությունում: Ինչ եղանակով է որոշվում շունթի ֆրակցիան փոքր արյան շրջանառությունում և ինչ գործոններ են նպաստում նրա փոփոխությանը:
12. Ինչ եղանակով կարելի է որոշել թոքային զարկերակի արյունահոսքը: Ինչպես կարելի է որոշել թոքային անոթային դիմադրությունը և ինչ գործոններ են նպաստում նրա փոփոխությանը:
13. Ինչ մեխանիզմներով են զարգանում և ինչն է տարբերությունը բարձր և ցածր ճնշմամբ պայմանավորված թոքի այտուցի: Գնահատման և տարբերակիչ ախտորոշման մեթոդները:

14. Որոնք են շնչառության կարգավորման հիմնական բաղադրիչները: Որ գործոններն են նպաստում շնչառության կարգավորման փոփոխությանը և խանգարմանը: Նշեք թոքերի ընկալիչներն ու նրանց ֆունկցիաները:
15. Ինչ է տեղի ունենում օրգանիզմի տարբեր «կոմպարտմենտների» հետ իզոտոնիկ, հիպերտոնիկ և հիպոտոնիկ հեղուկներ ներարկելիս: Որ վիճակներն են բերում հիպո- և հիպերնատրիեմիայի: Շտկման ճիշտ մեթոդների ընտրությունը:
16. Ինչ մեխանիզմներով է կատարվում կծիկային ֆիլտրացիան և ինչպես է կարգավորվում: Ինչպես կարելի է այն գնահատել կլինիկական պայմաններում: Ինչպես է փոխվում կծիկային ֆիլտրացիան սուր երիկամային անբավարարության ժամանակ: Որոնք են ակտիվ և պասիվ ռեաբսորբցիայի մեխանիզմները երիկամներում:
17. Ինչ մեխանիզմներով է կարգավորվում պլազմայի օսմոյարությունը և ջրի ընդհանուր հավասարակշռությունը օրգանիզմում: Որոնք են հակամիզամուղային հորմոնի արտազատման մեխանիզմները և արտազատման խանգարման հետևանքները:
18. Ինչպես է գործում ստամոքսում ջրածնային պոմպը և որ գործոններն են ազդում նրա աշխատանքի վրա: Որոնք են ստամոքսահյութի արտազատման հիմնական ֆիզիոլոգիական կարգավորիչները և ինչպիսին են նրա հիմնական փուլերը: Որ գործոններն են ապահովում ստամոքս-աղիքային համակարգի օրգանների մոտորիկան:
19. Որոնք են ենթաստամոքսային գեղձի արտազատման հիմնական ֆիզիոլոգիական կարգավորիչները և ինչպիսին են նրա հիմնական փուլերը:
20. Որոնք են լյարդի հիմնական ֆիզիոլոգիական ֆունկցիաները:
21. Ինչպես է կատարվում ինհալյացիոն անեսթետիկների կենսաձևափոխումը: Որն է կոչվում նվազագույն ավելոյար կոնցենտրացիա և ինչ է ինհալյացիոն անեսթետիկների «վերաբաշխման գործակիցը»:
22. Ինչպես են շնչառական համակարգի և հեմոդինամիկայի վրա ազդում ինհալյացիոն անեսթետիկները: Ինչպիսի առանձնահատկություններ կան ցածր և բարձր հոսքով անեսթեզիաների դեպքում:
23. Բարբիտուրատներ: Հատկություններն ու կողմնակի ազդեցությունները: Ինչպիսի դեղաչափերով են կիրառվում անչափահասների և մեծահասակների անեսթեզիոլոգիական ապահովման ժամանակ:
24. Բենզոդիազեպիններ: Հատկություններն ու կողմնակի ազդեցությունները: Ինչպիսի դեղաչափերով են կիրառվում անչափահասների և մեծահասակների անեսթեզիոլոգիական ապահովման ժամանակ: Որոնք են միդազոլամի և դիազեպամի էական տարբերությունները:
25. Պրոպոֆոլ: Հատկություններն ու կողմնակի ազդեցությունները: Ինչպիսի դեղաչափերով են կիրառվում անչափահասների և մեծահասակների անեսթեզիոլոգիական ապահովման ժամանակ:
26. Կետամին: Հատկություններն ու կողմնակի ազդեցությունները: Ինչպիսի դեղաչափերով են կիրառվում անչափահասների և մեծահասակների անեսթեզիոլոգիական ապահովման ժամանակ:
27. Էթոմիդատ և դեքամեդետոմիդին: Հատկություններն ու կողմնակի ազդեցությունները: Ինչպիսի դեղաչափերով են կիրառվում:

28. Անեսթեզիոլոգիայի և ինտենսիվ թերապիայի պրակտիկայում կիրառվող օֆիոիդները: Դասակարգումը, հատկություններն, կողմնակի ազդեցությունները, դեղաչափերը: Օֆիոիդների ռեցեպտորների ազոնիստ-անտազոնիստները:
29. Անեսթեզիոլոգիայի պրակտիկայում կիրառվող դեղամիջոցների պրոկոնվուսիվ և հակակոնվուսիվ հատկությունները: Ինչպիսի առանձնահատկություններ կան էպիլեպսիայով տառափող հիվանդների անեսթեզիոլոգիական ապահովման ժամանակ:
30. Տեղային անեսթետիկների, օֆիոիդների և կետամինի ազդեցության առանձնահատկությունները ողնուղեղային, էպիդուրալ տարածություն ներարկման ժամանակ: Ինչպես է ճարպալուծությունը ազդում օֆիոիդների ազդեցության վրա ողնուղեղային, էպիդուրալ տարածություն ներարկման ժամանակ:
31. Ինչպես է անեսթեզիոլոգիական ապահովման ժամանակ ախտորոշվում ոչապարենեոացնող միոռելաքսանթների էլիմինացիայի խանգարումները: Ինչպես է դադարում նրանց ազդեցությունը: Որ դեղամիջոցներն են պոտենցում նրանց ազդեցությունը:
32. Ինչ գործոններից է կախված տարբեր տեղային անեսթետիկների ազդեցության հզորությունը:
33. Ինչպիսին են սիրտ-անոթային պաթոլոգիաներով տառափող հիվանդների նախավիրահատական հետազոտության ստանդարտ մոտեցումները:
34. Ինչպիսին են շնչառական համակարգի պաթոլոգիաներով տառափող հիվանդների նախավիրահատական հետազոտության ստանդարտ մոտեցումները:
35. Ինչպիսին են շաքարային դիաբետով տառափող հիվանդների նախավիրահատական հետազոտության ստանդարտ մոտեցումները:
36. Ինչպիսին առանձնահատկություններ ունի տարեց մարդկանց անեսթեզիոլոգիական ապահովումը:
37. Ինչպիսին առանձնահատկություններ ունի հղիների անեսթեզիոլոգիական ապահովումը, մանկաբարձական միջամտությունների և մանկաբարձական արյունահոսությունների դեպքում:
38. Ինչպիսին առանձնահատկություններ ունի նեյրովիրաբուժական միջամտությունների անեսթեզիոլոգիական ապահովումը:
39. Ինչպիսին առանձնահատկություններ ունի կարդիովիրաբուժական միջամտությունների անեսթեզիոլոգիական ապահովումը:
40. Ինչպիսին առանձնահատկություններ ունի անեսթեզիոլոգիական ապահովումը շնչափողի և թոքերի վրա կատարվող միջամտությունների ժամանակ:
41. Ինչպիսին առանձնահատկություններ ունի անեսթեզիոլոգիական ապահովումը լապարոսկոպիկ և ստամոքս-աղիքային տրակտի օրգանների վրա բաց վիրահատական միջամտությունների ժամանակ:
42. Ինչպիսին առանձնահատկություններ ունի անեսթեզիոլոգիական ապահովումը լյարդի վրա կատարվող միջամտությունների ժամանակ:
43. Ինչպիսին առանձնահատկություններ ունի անեսթեզիոլոգիական ապահովումը վահանազեղձի պաթոլոգիաների և մակերիկամների վրա կատարվող միջամտությունների ժամանակ:

44. Ինչպիսին առանձնահատկություններ ունի անեսթեզիոլոգիական ասպահովումը ուրոլոգիական միջամտությունների ժամանակ:
45. Ինչպիսին առանձնահատկություններ ունի անեսթեզիոլոգիական ասպահովումը տրավմատոլոգիական-օրթոպեդիկ պորֆիլի հիվանդների պլանայի և շտապ վիրահատական միջամտությունների ժամանակ:
46. Ինչ է նշանակում և ինչպես է իրականացվում “Damage-control” սկզբունքը ծանր պոլիտրավմայով հիվանդների մոտ:
47. Ինչով կարող է պայմանավորված լինել հանկարծակի մահվան համախտանիշը վիրահատական միջամտության ընթացքում: Ինչպիսին են շտապ ախտորոշման և բուժման սկզբունքները կյանքին վտանգ սպառնացող իրավիճակներում:
48. Որոնք են ողնուղեղային անզգայացման ընթացքում կյանքին վտանգ սպառնացող բարդությունները: Բուժման մոտեցումը: «Մոզաիկ բլոկի» զարգացումը ողնուղեղային անզգայացման ժամանակ:
49. Բարդ ինտուբացիայի կանխորոշվող և չկանխորոշվող բարդությունները: Կենտրոնական երակների կատետերիզացիայի հնարավոր բարդությունները և շտկման մոտեցումները:
50. Ինչպիսին առանձնահատկություններ ունի անեսթեզիոլոգիական ասպահովումը նախավիրահատական և վիրահատական շրջանում մեծ վենտրալ ճողվածքով տառափող հիվանդների մոտ:
51. Կրիտիկական վիճակներում գտնվող հիվանդների ծանրության աստիճանի գնահատումը և մահածության կանխատեսումը:
52. Համակարգային բորբոքային ռեակցիայի համախտանիշ, սեպսիս: Պաթոֆիզիոլոգիա, զարգացման փուլերը և կլինիկական բնութագիրը:
53. Բազմաօրգանային անբավարարության համախտանիշ: Կլինիկական-լաբորատոր ախտորոշումը, բնորոշ նշանները և մարկերները:
54. Հակամանրէային բուժում: Ցուցումները, ուղեցույցները և բարդությունները:
55. Տարբեր անոթասեղմիչների և ինոտրոպների կիրառման ցուցումները: Ինֆուզիայի հսկման մեթոդական մոտեցումները և ազդեցության գնահատումը:
56. Ինֆուզիոն թերապիայի արդյունավետության գնահատումը: Պրեպարատների ընտրությունը, հնարավոր բարդությունները:
57. Ներզանգային հիպերտենզիայի համախտանիշ, զարգացման պատճառները, ախտորոշման սկզբունքները, բուժման մոտեցումները:
58. Ուղեղի այտուց, տեսակները, մոնիտորինգի մոտեցումները և բուժումը:
59. Դեկորտիկացիոն և դեցերեբրացիոն համախտանիշի պրոգնոստիկ նշանակությունը:
60. Էպիլեպտիկ ստատուս: Առանց ախտանիշների ընթացող էպիլեպտիկ ստատուսի ախտորոշումը: Մոնիտորինգի հիմնական սկզբունքները և բուժումը:
61. Օբստրուկտիվ և ռեստրիկտիվ շնչական խանգարումների տարբերակիչ ախտորոշումը:
62. Մեծահասակների ռեսպիրատոր դիստրես համախտանիշ: Պաթոգենեզը, զարգացման փուլերը, կլինիկական բնութագիրը:
63. Թոքային զարկերակի մանր և խոշոր ճյուղերի թրոմբոէմբոլիա: Պաթոգենեզը, ախտորոշումը, կանխարգելման և բուժման առանձնահատկությունները:

64. Թոքերի արհեստական շնչառության օժանդակ ռեժիմները: Նրանց տեխնիկական բնութագրերը և շնչառական ու հեմոդինամիկ տարատեսակ պարամետրերի վրա ազդեցության առանձնահատկությունները:
65. Արհեստական շնչառության պայմաններում գտնվող հիվանդների մոտ արտաշնչման վերջում դրական ճնշման ստեղծման մեթոդի (PEEP) ազդեցության մեխանիզմը, ցուցումները և կիրառումը:
66. Թոքերի արհեստական շնչառության հարկադրական ռեժիմները, ցուցումները և հիմնական թերությունները:
67. Մեծահասակների ռեսպիրատոր դիստրես համախտանիշով տատափող հիվանդների մոտ թոքերի արհեստական շնչառության կիրառման առանձնահատկությունները:
68. Որովայնային կոմպարտմենտ համախտանիշի զարգացման մեխանիզմը: Ներորովայնային ճնշման ու որովայնայի պերիտոնեոսի ճնշման գնահատման մեթոդները և նրանց կանխատեսիչ նշանակությունը: Թոքերի արհեստական շնչառության և ինտենսիվ թերապիայի առանձնահատկությունները:
69. Երկարատև թոքերի արհեստական շնչառության հետ կապված երկրորդային բարդությունները:
70. Երկարատև թոքերի արհեստական շնչառության իրականացումից հետո հիվանդներին ապարատային շնչառությունից անջատման սկզբունքները:
71. Նյարդամկանային հաղորդականության խանգարումները, տարբերակիչ ախտորոշման առանձնահատկությունները և բուժումը:
72. Շաքարային դիաբետի դեկոմպենսացված ձևերը, տեսակները, ախտորոշումը, ինտենսիվ թերապիան և հնարավոր բարդությունները:
73. Սուր հիպոպարաթիրեոիդ կրիզ: Պարթոֆիզիոլոգիական տեղաշարժերը, ախտորոշումը, կլինիկական նշանները և ինտենսիվ թերապիան:
74. Սուր մակերիկամային անբավարարություն: Պարթոֆիզիոլոգիական տեղաշարժերը, ախտորոշումը, կլինիկական նշանները և ինտենսիվ թերապիան:
75. Ոչստերոիդային հակաբորբոքային պրեպարատների կիրառումից առաջացած բարդությունների ախտորոշումը և բուժումը:
76. Սուր և ձգձգվող ընթացքով ընթացող պերիտոնիտով տատափող հիվանդների վարման առանձնահատկությունները:
77. Պոլիտրավմա և տրավմատիկ հիվանդություն: Պոլիտրավմայով հիվանդների մոտ վնասվածքների ախտորոշման սկզբունքները: Ինտենսիվ թերապիայի անցկացման տակտիկական մոտեցումները:
78. Երկրորդային նոզոկոմիալ բարդությունները ինտենսիվ թերապիայի հիվանդների մոտ:
79. Սուր սրտային անբավարարության երևույթների ախտորոշիչ և թերապևտիկ մոտեցումները:
80. Սուր թրոմբոէմբոլիկ բարդությունների պրոֆիլակտիկայի տակտիկական մոտեցումները:
81. Սուր երիկամային անբավարարությունն ինտենսիվ թերապիայի հիվանդների մոտ: Պատճառները, զարգացման մեխանիզմները, մոնիտորինգը և բուժումը:

82. Սուր էստերալ անբավարարության համախտանիշը ինտենսիվ թերապիայի հիվանդների մոտ: Պատճառները, զարգացման մեխանիզմները, մոնիտորինգը և բուժումը:
83. Սուր լյարդային անբավարարությունն ինտենսիվ թերապիայի հիվանդների մոտ: Պատճառները, զարգացման մեխանիզմները, մոնիտորինգը և բուժումը:
84. HELLP-համախտանիշ: Էթիոլոգիան, պատոգենեզը, ախտորոշումը, բուժման հիմնական մոտեցումները:
85. Ներքի և արտաքին հեմոստազի մեխանիզմները, հնարավոր խանգարումները: Ներանոթային սփռված մակարդման համախտանիշ: Էթիոլոգիան, պատոգենեզը, ախտորոշումը, բուժման հիմնական մոտեցումները:
86. Թիրեոտոկսիկ կրիզ: Էթիոլոգիան, պատոգենեզը, ախտորոշումը, բուժման հիմնական մոտեցումները:
87. Երկարատև ճնշման համախտանիշ (Crash syndrome): Պատոգենեզը, ախտորոշումը, բուժման հիմնական մոտեցումները:
88. Քիմիոթերապիայի բարդությունները: Հիմնական ախտանիշները, մոնիտորինգը և ինտենսիվ թերապիան:
89. Սուր պանկրեատիտ: Էթիոլոգիան, պատոգենեզը, ախտորոշումը, բուժման հիմնական մոտեցումները:
90. Բարբիտուրատներով թունավորում: Պատոգենեզը, ախտորոշումը, բուժման հիմնական մոտեցումները:
91. Բենզոդիազեպիններով թունավորում: Պատոգենեզը, ախտորոշումը, բուժման հիմնական մոտեցումները:
92. Ֆոսֆորօրգանական նյութերով թունավորումը: Պատոգենեզը, ախտորոշումը, բուժման հիմնական մոտեցումները:
93. Հիպերտոնիկ կրիզ: Պատոգենեզը, ախտորոշումը, բուժման հիմնական մոտեցումները:
94. Սրտի ուղիղ սուր խանգարումներ: Պատոգենեզը, ախտորոշումը, բուժման հիմնական մոտեցումները:
95. Շոկերի դասակարգումը: Տարատեսակ շոկերի հեմոդինամիկ պրոֆիլները:
96. Կենտրոնական հեմոդինամիկայի և վոլեմիկ կարգավիճակի գնահատման կլինիկական մեթոդները:
97. Հիպօքսիա և հիպօքսեմիա: Կլինիկական գնահատման մոտեցումները և շտկումը:
98. Կոմատոզ վիճակների տարբերակիչ ախտորոշումը:
99. Կերակրափողային և ստամոքս-աղիքային արյունահոսություններ: Էթիոլոգիան, պատոգենեզը, ախտորոշումը, բուժման հիմնական մոտեցումները:
100. Ծավալուն արյան փոխներարկման համախտանիշ և ոչհոմոլոգիական արյան փոխներարկում: Պատոգենեզը, ախտորոշումը, բուժման հիմնական մոտեցումները:

Գրականություն

1. Drew Provan, Andrew Krentz “Oxford Handbook of Clinical and Laboratory Investigation” // Oxford University Press 2002, London, UK
2. Ronald D. Miller “Miller’s Anesthesia” // Lippincot, London, UK, 2006, vol. 1, 2, 3, 4.
3. James Duke “Anesthesia secrets” // 4-th ed., Mosby, Canada, 2011, 574 p.
4. Parillo J.E., Dellinger R.P. “Critical Care Medicine” / 3-rd ed., Mosby, Philadelphia, 2007
5. Barash, Paul G.; Cullen, Bruce F.; Stoelting, Robert K. “Clinical Anesthesia” // 5th Ed., 2006, Lippincott
6. Peek T.E. “Pharmacology for anesthesia and Intensive Care” // Australia, 2000
7. J.P. Howard “Physiology for Anaesthesiologists”// Taylor & Francis e-Library, London, UK, 2005.
8. Marino Paul L. “ICU Book” // 3-rd Ed., Lippincott Williams & Wilkins, 2007
9. Judith E. Tintinalli, J. Stephan Stapczynski, O. John Ma, David M. Cline, Rita K. Cydulka, and Garth D. Meckler “Tintinalli's Emergency Medicine:A Comprehensive Study Guide”// 7-th ed., 2008
10. Simon Bricker “The Anaesthesia Science Viva Book” // 2-nd Ed. , Cambridge University Press, 2009
11. G. Edward Morgan, Jr., Maged S. Mikhail, Michael J. Murray “ Clinical Anesthesiology” // 4-th Ed., McGraw-Hill Companies, United States of America, 2006
12. Tim Smith, Colin Pinnock, Ted Lin “Fundamentals of Anaesthesia” // 3-rd Ed., Cambridge University Press 2009
13. M. Brenner “Critical Care and Cardiac Medicine. Current Clinical Strategies” // USA, 2006
14. David Sprigings, John B. Chambers “Acute Medicine. A practical guide to the management of medical emergencies” // 4-th ed. London, UK, 2008
15. David M, Gaba, Kevin J. Fish, Steven K. Howard “CRISIS MANAGEMENT IN ANESTHESIOLOGY” // Churchill Livingstone, New York, 2006
16. A.Gullo, P.D.Lumb “Intensive and Critical Care” // Springer, Milan, Italy, 2005
17. J.J. Marini, A.P. Wheeler “ Critical Care Medicine” / 2-dd ed., Williams & Wilkins, Philadelphia, 2002
18. “Интенсивная терапия” Национальное руководство в 2-х томах под ред. Б.Р. Гельфанда и А.И. Салтанова // “ГЭОТАР – МЕДИА”, Москва, 2009
19. “Анестезиология” Национальное руководство в 2-х томах под ред. А.А. Буниатяна и В.М. Мизикова // “ГЭОТАР – МЕДИА”, Москва, 2011